ծութենէ հրաժարման անապատին՝ թէ որքան տրտմէին տարատրոհեալ միանձունքն՝ զի զրկեցան ի իրատէ և ի տեսս նորա. ոչ միայն ասունքն՝ այլ և անասունքն, պաճարեղէնքն և շաղղակերքն, աւդաւինքն և ջրայինքն, բոյսքն և անբոյսքն։ Քանզի երկնէր երկիրն՝ և հեծէր ամպային, քրքուէին քարինքն՝ և լային լերինքն, տրըտրմէին տունկքն՝ և բեկտէին բոյսքն, հառաչէին հաւքն՝ ա և թախծէին թըռչունքն, գոռային գազանքն՝ և գորովէին դիշխանձքն, պապաչէին պոռոչէին պաճարքն՝ և արտասուէին [թղ. 14 ա] անասունքն, բչէին բրբչէին, մընչէին, մրռնչէին, և յոգւոց հանէին ի բաժանման սրբոյն. քանզի դարմանող էր նոցա, և նոքա հնազանդ և ձեռասուն նմա, որպէս նախաստեղծին նախ քան զյանցանսն. մինչդեռ անսխալ և անշարժ էր պատկերն, և ամենայն ինչ հնազանդ ի ներքոյ ոտից նորա։

Զինչ և զինաւորացն զատիլ ի նմանէ, և զաւրավարին պակասումն ի զաւրաց նորա. և զշաւորացն գերիլ ի նմանէ. և որքան տրխրութիւն լինէր թագաւորին ի գընալն նորա. քանզի բազում պակասութիւն լինէր և կոբուստ արքայական հարկին՝ յաղագս ոչ գիտելոյ զգիրս և զհամարս նոցա։

ա. Ձեռ. հավին։